Դանիել Վարուժան

Կակաչներ

Քո՛ւյր իմ, ցանքին մեջ կակաչներ կան, քաղե՛.
Ահա սիրող սիրտերու պես կարյունին:
Պիտի իրենց բաժակներեն բյուրեղե
Խըմենք ալիքն արևին:

Անոնք ա՛յնչափ բոնկեր են, որ կարծես
Հըդեհն իրենց կայրե դաշտերը անհուն:
Պիտի իրենց բաժակներեն հրակեզ
Խմենք կայծերն աստղերուն:

Քո՛ւյր իմ, քաղե՛, լորի մը պես ծածկված
Ցորեններուն մեջ՝ որ մեղմիկ կնազին:
Պիտի իրենց բաժակներեն բոսորած
Խմենք արյունն ակոսին:

Անոնք ծռած արտույտներու բույնին վրա
Լալ շողերով ողկույզ ողկույզ կծըփան:
Պիտի իրենց բաժակներեն հակնթյա
Խմենք խոստումը Գարնան:

Քաղե՛, քո՛ւյր իմ, կակաչ չէ՛, բո՛ց քաղե դուն.
Հրդեհն իրենց լեցուր զոգնոցդ կույսի:
Պիտի իրենց բաժակներեն փափկասուն

Խմենք կրակներն Հունիսի:

Ծաղկե՛ր, ծաղկե՛ր են բերնիդ պես քնքշենի,
Կխոսակցին ցորյանին հետ օրորուն:
Պիտի իրենց բաժակներեն ծիրանի
Խմենք գաղտնիքն հասկերուն:

Քաղե՛, քույր իմ, պիտի պսակվինք անոնցմով
Վաղվան զվարթ տոնին համար գյուղակին:
Եվ պիտի այդ բաժակներեն, պարելով,
Խմենք գինին Տարփանքին: